Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

2. Ծրագիրը ներառում է 2015թ. դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

3. Ծրագիրը նպատակաուղղված է դատական կարգադրիչների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը վարքաբանության, առաջին բուժական և հոգեբանական օգնության, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ոլորտներում:

4. Ծրագիրն իրականացվում է ութօրյա ժամկետում (երկուշաբթիից մինչև հաջորդ երկուշաբթի՝ ներառյալ)՝ 40 ակադեմիական ժամ ընդհանուր ժամաքանակով, առկա ուսուցման ձևով և ավարտվում վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

5. Ծառայողների վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2015 թվականի մայիսից օգոստոսը:

II. Դասավանդվող առարկայական դասընթացների ցանկը

N	Դասիչը	Անվանումը	Ժ/ք
1.	G-015-15	Դատական կարգադրիչների վարքաբանություն	12
2.	G-016-15	Առաջին բուժական և հոգեբանական օգնություն	12
3.	S-001-15	Հրազենի գործադման հմտություններ	6
4.	S-002-15	Հատուկ միջոցների գործադրման հմտություններ	10

III. Դասավանդվող առարկայական դասընթացների համառոտ նկարագիրը

1. G-015-15. Դատական կարգադրիչների վարքաբանություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական կարգադրիչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումն ապահովելու համար:

Դասընթացը ներառում է դատական կարգադրիչների ծառայական վարքագծի կանոնները, քաղաքացիների հետ նրանց շփումների վարքաբանության հիմունքները և այլ հարցեր:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ G-016-15 դասընթացի հետ միասնական քննությամբ:

2. G-016-15. Առաջին բուժական և հոգեբանական օգնություն

Դասընթացն անհրաժեշտ է դատական մարմինների հետ շփվող քաղաքացիների հոգեբանական և առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ դատական կարգադրիչներին օգնելով առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական գործառույթները:

Դասընթացը ներառում է անհատական և խմբային գործընթացների հոգեբանական բնութագրությունը, սթրեսի հիմքերը և տեսակները, դրա կառավարման մեթոդները, առաջին բուժօգնության հիմունքները, միջոցների և մեթոդների բնութագիրը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ G-015-15 դասընթացի հետ միասնական քննությամբ:

3. S-001-15. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական կարգադրիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով:

4. S-002-15. Հատուկ միջոցների գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական կարգադրիչների մոտ հատուկ միջոցների գործադրման հմտություններ ձևավորելու համար:

Գնահատումն իրականացվում է հմտությունների գործնական ստուգման եղանակով: